ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶ

ՆՈՐ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ

2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Մշակվել է՝համայնքի ղեկավարի և համայնքապետարանի աշխատակիցների կողմից
Ներկայացվել է՝ համայնքի ղեկավար Արթուր Ավետիսյանի կողմից
Հաստատվել է՝ համայնքի ավագանու 2017թ հունվարի 18-ի թիվ 1 **- Ն** որոշմամբ

Գ.Նոր Արմավիր 2017թվական

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……..……..
2.ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ.....
3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ .....
4. ՀԶՀԾ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ……...
5. ՀԶՀԾ-Ի ՄՈՆԻԹՈՐԻՆԳ……
6. ԵԶՐԱՓԱԿՈՒՄ.....

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի Նոր Արմավիր համայնքի 2017-2021 թթ. զարգացման հնգամյա ծրագիրը (այսուհետ՝ ՀԶՀԾ) մշակելիս հաշվի է առնվել, որ համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի, ՏԻՄ-երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են հինգ տարի ժամկետով, և 210-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին » ՀՀ օրենքը պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը և ուժի մեջ մտնի 2017 թվականի հունվարի 1-ից: Հաշվի առնելով այդ պահանջները՝ մշակվել է համայնքի զարգացման ոչ թե քառամյա, այլ հնգամյա ծրագիր:

ՀԶՀԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասություններն ու լիազորությունները նրանց գործունեության բնագավառներում (ոլորտներում), ՀԶՀԾ-ի մշակման և կառավարման վերաբերյալ համապատասխան հոդվածների դրույթները, ինչպես նաև Արմավիրի մարզպետի կողմից ներկայացված համայնքի հնգամյա զարգացման ծրագրի մշակման մեթոդական ուղեցույցը:

- **Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի մշակաման մեթոդաբանական առանձնահակությունները /այսուհետ՝ ՀԶՀԾ/**

Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման,ֆինանսական,տնտեսական,բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է,որը նախատեսվում է ռազմավարական կտրվածքով համայնքի հիմնաղնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացումը:Համայնքի քառամյա զարգացման ծրագիրը պետք է համահունչ լինի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի և կառավարության հավանությանն արժանացած մարզային,տարածաշրջանային զարգացման և այլ ռազմավարական ծրագրերին: ՀՀ Արմավիրի մարզի Նոր Արմավիր համայնքի 2017-2021 թթ. զարգացման հնգամյա ծրագիրը (այսուհետ՝ ՀԶՀԾ) մշակելիս հաշվի է առնվել, որ համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի, ՏԻՄ-երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են հինգ տարի ժամկետով, և 210-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին » ՀՀ օրենքը պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը և ուժի մեջ մտնի 2017 թվականի հունվարի 1-ից: Հաշվի առնելով այդ պահանջները՝ մշակվել է համայնքի զարգացման ոչ թե քառամյա, այլ հնգամյա ծրագիր: Ներկայացվող ՀԶՀԾ-ն առաջիկա հինգ տարիների համար հանդիսանալու է Նոր Արմավիր համայնքի զարգացման հիմնական փաստաթղթերից մեկը: ՀԶՀԾ-ի բովանդակությունը պայմանավորված է համայնքի ռեսուրսային (մարդկային, գույքային, ֆինանսատնտեսական, տեխնիկական և այլ) հնարավորություններով, համայնքային ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և

ենթակառուցվածքների առկայությամբ: ՀԶՀԾ-ում հնարավորինս հաշվի են առնվել համայնքի հանրային ծառայությունների մատչելիության և հասանելիության, նոր ծառայությունների մատուցման և դրանցով պայմանավորված լրացուցիչ ծախսեր առաջանալու խնդիրները: ՀԶՀԾ-ն մշակելիս որպես կողմնորոշիչ են դիտարկվել համայնքի զարգացնելու անհրաժեշտությունը, համայնքի տարածքում տնտեսական գործունեության խրախուսման առկա հնարավորությունները, տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման (հատկապես՝ արտադրական կազմակերպությունների, փոքր և միջին բիզնեսի և այլնի) հնարավորությունները, արդյունավետ կառավարման իրականացումը:

2.ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Նոր Արմավիր գյուղը վեր է խոյացել Ուրարտական պետության մայրաքաղաք Արգիշտիխինիլի արվարձաների փլատակների վրա/որը կործանվել է մ.թ.ա. 6 դարում՝ 525 թ/՝ 1922թվականին:

Համայնքի սոցիալ-տնտեսական վիճակը վերջին տարիներին այնքան էլ բարվոք չէ,

Համայնքում բավականին բարձր է գործազրկության մակարդակը, որը նպաստում է արտագնա աշխատանքներին:

Նոր Արմավիր համայնքի հիմնախնդիրներն են՝

1.Մշակույթի տան վերանորոգում / գրադարանի և բուժարանի վերանորոգում/:

2. Ճանապարհի ասֆալտապատում:

3.Դպրոցի հիմնանորոգում :

4.Մանկապարտեզի շենքի մասնակի վերանորոգում և գույքի ձեռքբերում:

5.կանգառների տեղադրում:

2.2 ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Աղյուսակ 1. Համայնքի մշտական բնակչության ու տնային տնտեսությունների ցուցանիշները (01.10.2016 թ. դրությամբ)

Հ/Հ	Ցուցանիշները	Մարդ
1.	Բնակչության առկա թվաքանակը	1935
2.	Տնային տնտեսությունների թվաքանակը	352
2.1	այդ թվում՝ ժամանակավոր կացարաններում /վագոն, տնակ/ բնակվող	6
2.2	կիսակառույց տներում բնակվող	12
3.	Ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների քանակը	22

Համայնքի բնակչության տարիքային և սոցիալական կազմը ներկայացված է աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Համայնքի առկա բնակչության տարիքային և սոցիալական կազմի ցուցանիշները (01.01.2016 թ. Դրությամբ)

Հ/Հ	Ցուցանիշները	Ընդամենը	Կանայք	Տղամարդիկ
1.	Համայնքի բնակչության թիվը, այդ թվում՝	1998	1031	967
	մինչև 1 տարեկան	24	13	11
	1-2 տարեկան	51	25	26
	3-4 տարեկան	47	18	29
	5-6 տարեկան	45	20	25
	7-10 տարեկան	52	23	29
	11-14 տարեկան	59	31	29
	15-17 տարեկան	61	30	31
	18 և ավելի տարեկան	178	87	91
2.	Կենսաթոշակառուներ (ներառյալ հաշմանդամներ) այդ թվում՝	147	65	82
3.	Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	11	5	6
4.	Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ	1	1	
5.	Հաշմանդամ երեխաներ	7	5	2
6.	Խնամակալության հանձնված երեխաներ	4	3	1
7.	Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ	37		1
8.	Արցախյան պատերազմի մասնակիցներ			
9.	Հաշմանդամներ	22	60	62
10.	Զբաղվածներ /հողագործությամբ/	160		
11.	Գործազուրկներ	43		
12.	Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը	22		
13.	Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքների թիվը	2		

Գործազուրկների մեծամասնությունը կազմում են կանայք: Տղամարդկանց աշխատունակ մի մասը զբաղված է արտագնա աշխատանքով:

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՏԱՐԱԾՔԸ

- Նոր Արմվիր համայնքի վարչական տարածքը – 376.0 հա
- Գյուղատնտեսական նշանակության հողեր – 296.6
- Բնակավայրային նշանակության հողեր –136.4ա
- Էներգետիկայի և տրանսպորտի հողեր-5.28 հա
- հատուկ պահպանվող հողեր-2.56հա
- Ջրային ֆոնդեր – 8.9 հա
- Բնակավայրի տարածքը – 175.89 հա
- Հողի սեփականաշնորհման մասնակցած ընտանիքների թիվը -352
- Մեկ հողաբաժնի չափը մինչև 0.5 հա
- Նոր Արմավիր համայնքի սեփականություն համարվող հողեր – 7.7 հա

2.2 ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

- Նոր Արմավիր համայնքի 2017 թվականի ընդհանուր բյուջեն կազմել է 43031.9 հազար դրամ:
- Որի մեջ համայնքի սեփական եկամուտը կազմում է 30.1 %

Համայնքում հիմնականում զբաղվում են հողագործությամբ : Սոցիալական ծառայությունից օգտվում են սոցիալապես անապահով պայմաններում ապրող 22 ընտանիքներ:Նրանց մեջ կան հաշմանդամներ,միակողմանի ծնողազուրկ և սեփականաշնորհված հողեր չունեցող ընտանիքներ:Համայնքում բավականին բարձր է գործազրկության թիվը: Գյուղատնտեսության ոլորտում բնակչության զբաղվածությունը 90 տոկոս է: Համայնքում առկա է 113 Խոշոր եղջերավոր անասուններ՝ 113 կով,մանր եղջերավոր անասուններ /խոզ,ոչխար/՝ 126,407,թռչուններ՝ 2663:Համայնքում կան 16 տրակտորներ,որոնցից 15 անիվավոր,7 թրթուրավոր,6 կցասայլեր,25 բեռնատար ավտոմեքենաներ,ինչպես նաև գյուղատնտեսական աշխատանքների համար անհրաժեշտ գործիքներ

- Համայնքում զարգացած է գյուղատնտեսությունը հիմնական ճյուղերն են՝
  1. խաղողի այգիներ
  2. պտղատու այգիներ
  3. բանջարաբուծություն
- Գյուղատնտեսական արտանդրանքի վաճառքը իրականացվում է տեղում և մթերող կազմակերպություններում:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Համաձայն տեղական ինքնակառավարման մասին օրենքի տեղական ինքնակառավարման մարմիններ են համարվում Համայնքի ղեկավարը և ավագանին:
Համայնքը ղեկավարում է համայնքի ղեկավարը իր աշխատակազմի միջոցով:
Գյուղապետարանի աշխատակազմը բաղկացած է երկու բաժիներից ընդհանուր և ֆինանսական:
Գյուղապետարանում աշխատում են 3 համայնքային ծառայողներ, որոնց աշխատանքը համակարգում և ղեկավարում է համայնքի ղեկավարի և աշխատակազմի քարտուղարի կողմից:
Համայնքի ավագանին բաղկացած է 7 անդամներից, որոնց ընտրությունը կայացել է 2016 թվականի սեպտեմբերի 19-ին:

1. Համայնքի ղեկավար - 1
2. տեղակալներ - 1
3. օգնական - 1
4. համայնքային ծառայողներ -3
5. տեխնիկական աշխատող - 4

ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Համայնքի բնակֆոնդի ընդհանուր մակերեսը կազմում է 8.0 հա, բնակելի տների թիվը կազմում է 352 տուն, կիսակառույց տների թիվը՝ 12, ավտոտնակների թիվը՝ 150:
Համայնքում բազմաբնակարան շենքեր չկան:

Բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանություն ջրամատակարարում

Ջրաապահովվածության պայմաններով համայնքը գտնվում է օգտագործման համար պիտանի ստորգետնյա ջրերով ապահովված գոտում: Ջրամատակարարման համակարգերը կառավարվում է համայնքապետարանի միջոցների հաշվին: Հողատարածքները հիմնականում ոռոգելի են , ոռոգվում են Արաքս գետի ջրերով ինչպես նաև համայնքում առկա 3 արտեզյան հորերով
Ջրամատակարարման համար օգտագործվում է արտեզյան ջրեր:
Անբարենպաստ է գոյություն ունեցող ջրամատակարարման ցանցի տեխնիկական վիճակը:

Հիմնախնդիրներ՝
Ջրային կառույցների և մատակարարման ցանցի քայքայված և մաշված վիճակ .

ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ներհամայնքային ճանապարհների ընդհանուր երկարությունը 10կմ է,որոնց ծածկույթը հիմնականում գրունտային է:Կենտրոնական ճանապարհի երկարությունը 1.5կմ է:Ճանապարհները գտնվում են ոչ բարվոք վիճակում:Համայնքից մինչև մոտակա գյուղամթերքի վաճառքի շուկա ճանապարհի

հեռավորությունը կազմում է 9կմ:Համայնքով է անցնում մարզկենտրոն և մայրաքաղաք ուղևորատար տրանսպորտային ուղին,սպասարկումը լավ մակարդակի վրա է գտնվում:

Հիմնախնդիրներ՝

ներհամայնքային ճանապարհների անբարեկարգ վիճակ

հասարակական տրանսպորտի որոշ կանգառների անբարեկարգ վիճակ.

ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայքնի տարածքում գործում են մանրածախ առևտրի արտադրական նշանակության 3 Օբյեկտներ,որոնց սպասարկումից օգտվում են համայնքի բնակիչները:

- - առևտրի փոքր օբյեկտներ -3
- - գազի լիցքավորման կետեր - 1

Հիմնախնդիրներ՝

գովազդային վահանակների անբավարար քանակ և որակ.

տեղեկատվական սարքավորումների բացակայություն:

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԲԱԺԻՆ

Հմայնքում գործում է հանրակրթական մեկ դպրոց:Դպրոցում սովորում է 193 աշակերտ, Աշխատում՝37 հոգի,որից 28 ուսուցիչ,8 տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ:Դպրոցի շենքը գտնվում է անմխիթար վիճակում,մասնակի փոխվել է տանիքը և պատուհանները:

:Մանկապարտեզը շենքը 2015-2016թթ մասնակի վերանորոգվել է,միջոցներ չլինելու պատճառով ավարտուն տեսքի դեռ չի հասել,կարիք կա ճաշարանի նորոգման և գույքի ձեռքբերման,ուստի գործող մանկապարտեզ չունենք:

Մանկապարտեզի հիմնախնդիրներն են՝

- 1.Շենքի կապիտալ վերանորոգում
- 2. Ջեռուցման ապահովում
- 3. Բակի կապիտալ վերանորոգում
- 4. Տնտեսական ապրանքների, խաղալիքների և գույքի ձեռքբերում:

Համայնքն ունի մշակույթի տուն ,որտեղ գտնվում են գրադարանը և բուժկետը: Երիտասարդների դաստիարակության և զարգացման համար խիստ կարևոր է նաև գրադարանում առկա գրքային բազայի թարմացումը,որի մեծ մասը սովետական միությունից մնացած գրքեր են:

Հիմնախնդիրներ՝

ժամանակակից ընթերցողական գրականության կարիք.

տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ցածր մակարդակ.

Մշակութի տան շենքը ունի վերանորոգման կարիք,որը կնպաստի միջոցառումների անցկացման և մշակութային կյանքի աշխուժացմանը:

Հիմնախնդիրներ՝

մշակութային տան կահավորում, ջեռուցման համակարգերի ներդրման կարիք.

- երիտասարդների համար աշխատատեղերի բացակայություն.

- երիտասարդների համար ժամանցի կազմակերպման անբավարար վիճակ:

Ֆիզկուլտուրա և սպորտ

Համայնքում կա մեկ ամառային մարզադաշտ,որը զբաղեցնում է 0.74հա տարածք,սակայն անբարեկարգ վիճակում է:
Հիմնախնդիրներ՝

մարզադպրոցի կարիք.

ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի արմատավորման ոչ բավարար մակարդակ:

Ա Ռ Ո Ղ Ջ Ա Պ Ա Հ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Համայնքում գործում է մեկ ամբուլատորիա,որտեղ աշխատում է 4 բուժքույր և մեկ բժիշկ,որը սպասարկում է հարակից Նալբանդյան գյուղից:Բուժկետը առանձին շինություն չունի,տեղակայված է մշակույթի տան խարխլված շենքում,որը կարիք ունի վերանորոգման և չունի հնարավորություն բնակչությանը բարձրորակ սպասարկման համար:

Համայնքում չկան հանգստի գոտիներ,զբոսայգիներ և խաղահրապարակներ:

ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏԻՆԵՐ, ԶԲՈՍԱՅԳԻՆԵՐ, ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐ

Համայնքում չկան հանգստի գոտիներ,զբոսայգիներ և խաղահրապարակներ:

Էներգամատակարարում

Նոր Արմավիր համայնքի էներգահամակարգը կառավարվում է Հայաստանի էլցանցներ ընկերության կողմից:
Նոր Արմավիր համայնքի գազամատակարարումը իրականացվում է Գազպրոմ – Արմենիա ընկերության կողմից:

Արտաքին լուսավորություն

2016թ. դրությամբ Նոր Արմավիրի միայն միջհամայնքային ճանապարհն է լուսավորվել , լուսավորության ցանցը՝ 2 կմ, 40հենասյան վրա տեղադրվել են լուսատուներ

Հիմնախնդիրներ՝

արտաքին լուսավորության լուսակետերի անբավարար քանակ.
արտաքին լուսավորության ցանցի անբավարարություն
ներհամայնքային ճանապարհների լուսավորություն

2.3 ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐ

Համայնքում իրականացվում են ծրագրեր համայնքապետարանի կողմից՝

1.Մանկապարտեզի շենքի մասնակի վերանորոգում
2.Արտաքին լուսավորության ցանցի անցկացում

3.ներհամայնքային փողոցների նորոգում,փոսալցում

2.4 ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ և ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

Համայնքի բյուջեի մուտքերը, կարելի է ասել, ձևավորվում են բացառապես վարչական բյուջեի միջոցների հաշվին: Վարչական բյուջեի եկամուտները ձևավորվում են սահմանափակ թվով եկամտատեսակների՝ հարկերի, տեղական տուրքերի և գույքի վարձակալությունից եկամուտների հաշվին: Համայնքի բյուջեի կանխատեսվող եկամուտների մեծ մասը (2017թ.՝ 75.0%, 2018թ.՝ 75.3%, 2019թ.՝ 75.6 %, 2020թ.՝ 76.0%, 2021թ.՝ 76.3%,) ձևավորվում են պետական բյուջեից համայնքներին տրամադրվող ֆինանսական համահարթեցման դոտացիաների հաշվին (աղյուսակ 4):

Քանի որ համայնքի բյուջեի ֆոնդային մասում մուտքեր քիչ են կանխատեսվում, ապա պլանավորվող հինգ տարիների կապիտալ ծախսերը մեծամասամբ կիրականացվեն համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումների և դոնոր կազմակերպությունների հաշվին:

Աղյուսակ 3. Համայնքի 2015-2016թթ. բյուջեի մուտքերի ցուցանիշները և 2017-2021թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը

հազար դրամ

Հ/հ	Մուտքերի անվանումը	2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.	2021թ.
		փաստ.	փաստացի	կանխ.	կանխ.	կանխ.	կանխ.	կանխ.
	ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ	38214.8	43031.9	43031.9	45431.9	45892.0	46092.0	46632.0
1	ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ							
1.1	Հողի հարկ	8700.0	8900.0	8900.0	8900.0	9400.0	9500.0	9550.0
1.2	Գույքահարկ շենք շինությունների և փոխադրամիջոցների համար	2800.0	3900.0	3900.0	3900.0	5300.0	5400.0	5500.0
1.3	Տեղական տուրքեր	100.0	172.0	172.0	172.0	372.0	372.0	372.0
1.4	**Գույքի վարձակալությունից եկամուտներ** Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	320.0	320.0	320.0	320.0	320.0	320.0	320.0
2	**Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ/2.1+2.2/**	25794.8	29239.9	29239.9	29239.9	30500.0	30500.0	30800.0
2.1	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	25794.8	29239.9	29239.9	29239.9	30500.0	30500.0	30890.0

Աղյուսակ 4. Համայնքի 2017-2021թթ. բյուջեն
(եկամտների կանխատեսումը 2015թվականի համեմատ աճը

Եկամտի և ծախսի տեսակը	2015թ. տարեկան պլան	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.
Ընդամենը եկամուտներ	**38214.8**	**43031.9**	45431.9	45431.9	**46320.1**	**46320.1**
Հարկային եկամուտներ որից	12200.0	12972.0	12972.0	15072.0	15272.0	15422.0
Հողի հարկ	8700.0	8900.0	**8900.0**	**9400.0**	9500.0	9550.0
Գույքահարկ /շենք և ավտո/	2900.0	3900.0	3900.0	5300.0	5400.0	5500.0
Տեղական տուրքեր	100.0	172.0	172.0	372.0	372.0	372.0
Այլ եկամուտներ	500.0	500.0	1000.0	1000.0	1000.0	1000.0
Պաշտոնական ընթացիկ դրամաշն.	25794.8	29239.9	29239.9	**30500.0**	**30500.0**	**30890.0**

2.5. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ ԵՎ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կապիտալ վերանորոգման և բարեկարգման կարիք ունեն մանկապարտեզի շենքը, մշակույթի տունը, միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհները.

- գործազրկություն,սոցիալապես անապահով աղքատ բնակչություն, ցածր աշխատավարձի առկայություն
- խմելաջրի ցացի անմխիթար վիճակ
- ոռոգման համակարգի անմխիթար վիճակ

Գյուղատնտեսական արտադրանքի իրացման խնդիրը դժվարություններ է առաջացրել համայնքի բյուջե մուտքագրվող հողի հարկի և գույքահարկի գանձման գործընթացում:

Նշված հիմնահարցերի լուծման համար առկա դժվարությունները կապված են հիմնականում համայնքի եկամուտներից: Համայնքը չունի անհրաժեշտ եկամուտներ՝ իր առջև դրված հիմնահարցերը միանգամից լուծելու համար:

2.6.Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն

Համայնքի զարգացումն ապահովող միջոցառումների մշակման և իրատեսական արդյունքների հասնելու համար իրականացվել է համայնքի ուժեղ և թույլ կողմերի, արտաքին միջավայրի կողմից ընձեռնված հնարավորությունների և սպառնալիքների գնահատում

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1. Խմելու ջրի ներհամայնքային համակարգի առկայություն 2. Համայնքի գազաֆիկացվածության բարձր աստիճան 3. Հեռախոսակապի և հեռուստաընկերությունների առկայություն 4.Համայնքի աշխարհագրական դիրքը հարմար է ,մոտ է մարզկենտրոնին և կենտրոնական ճանապարհին: 5.Համայնքը գազաֆիկացված է 98 տոկոսով: 6.Առկա է հեռախոսակապ և ինտերնետ: *ֆիքսված հեռախոսակապ,բջջային հեռախեսակապ,փոստը և ինտերնետ կապը ապահովվում է ներքոհիշյալ կազմակերպությունների կողմից. Beeline AM(բջջային և ֆիքսված հեռախոսակապ,իներնետ) .Vivacell- MTS(բջջային հեռախոսակապ և ինտերնետ) .Orang տելեկոմ(բջջային հեռախոսակապ և ինտերնետ) 7.Հայփոստ /փոստային ծառայություն/ 8.Համայնքում առկա է 4 առևտրի օբյեկտներ 9.Խմելու ջրի ներհամայնքային համակարգի առկայություն 10.Համայնքում պատմամշակութային հուշարձանի առկայությունը:	1.Անբարեկարգ փողոցների առկայություն 3.Համայնքային ենթակայության կառույցների վերանորոգման և գույքի ձեռքբերման անհրաժեշտություն 4. Ծառայությունների մատուցման մշակույթի ոչ բավարար մակարդակ 5Առկա գործազրկություն 7.Բնակչության վարկունակության անկում 8. ժամանցի սահմանափակ հնարավորություն հատկապես երեկոյան ժամերին 9. Ներդրումային ծրագրերի և արտասահմանյան ներդրողների բացակայություն 10.Գյուղատնտեսական մթերքների իրացման խնդիր 11. Կարկտակայանների բացակայություն 12.միջհամայնքային ճանապարհի ասֆալտապատում 13 Վերամշակող ձեռնարկությունների բացակայությունը: 14. Սոցիալապես անապահով բնակչության բարձր տոկոսը:

Հնարավորություններ	Սպառնալիքներ
- Հեռանկարային ծրագրեր, որոնք կբերեն ֆինանսական կայունության - Մեծ է աշխատուժի առկայությունը - Համայնքի ղեկավարն ու ավագանին վայելում են բնակչության վստահությունը	Հարկային պարտավորությունների կատարման ցածր մակարդակը եղել և մնում է համայնքի թիվ մեկ խնդիրը,որը պայմանավորված է բնակչության սոցիալապես ցածր վիճակով,եղանակային ֆորս մաժորով,ինչպես նաև համայնքի բնակչության վարկային բեռի մեծությամբ:

3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

3.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆ

2021թվականին Նոր Արմավիր համայնքը դարձնել բարեկեցիկ,նպաստավոր պայմաններ ստեղծել բնակչության համար,բարձրացնել բնակչության կենսամակարդակը,բնակիչների համար ապահովել բարենպաստ կենսական պայմաններ՝ հիմնվելով գյուղմթերքների արտադրության վրա:

•ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

<<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 53-րդ հոդվածի համաձայն՝

Համայնքի նորընտիր ղեկավարը մշակում է համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը, և իր լիազորությունները ստանձնելու օրվանից հետո՝ երկամսյա ժամկետում ներկայացնում ավագանու հաստատմանը:Համայնքի ավագանին քննարկում է ներկայացված ծրագիրը ,անհրաժեշտության դեպքում՝ դրանց մեջ կատարում փոոխություններ և/կամ/ լրացումներ և ընդունում է այն՝ նիստին ներկա ավագանու անդամների ձայների մեծամասնությամբ:Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի գործողության ժամկետի ընթացքում համայնքի ավագանու անդամների ընտրություն կայացնելու դեպքում՝ ավագանու լիազորությունները ստանձնելուց հետո եռամսյա ժամկետում համայնքի ավագանու անդամների օրենքով սահմանված թվի առնվազն մեկ երրորդի կողմից կարող են առաջարկվել քառամյա զարգացման ծրագրում փոփոխություններ և /կամ/ լրացումներ:

Համայնքի զարգացման ռազմավարությունն է՝ բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները և մաքուր, բարեկարգ, կանաչապատ և գրավիչ բնակավայրը:

Զարգացման հիմնական ուղղությունների իրականացման գործընթացում խիստ կարևորվում է տեղական իշխանությունների, համայնքի բնակչության, լրատվամիջոցների և գործարարների համատեղ գործունեությունը, ինչպես նաև համագործակցությունը պետական կառավարման մարմինների և դոնոր կազմակերպությունների հետ:

Համայնքի կայուն զարգացման ցուցանիշներն են՝

- ✓ Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով),

- ✓ Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ,արտահայտված տոկոսով,
- ✓ Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը (չպայմանավորված բնական աճով) նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով:

Ցուցանիշների արժեքները հինգ տարիների համար ներկայացված է աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5. Համայնքի կայուն զարգացման ցուցանիշների կանխատեսվող արժեքները հինգ տարիների համար (2017-2021թթ.)

Հ/Հ	Ցուցանիշները	2017	2018	2019	2020	2021
1.	Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով)	10%	10%	9.0%	9.0%	8.0%
2.	Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ,արտահայտված տոկոսով	0.7%	2.0%	1.7 %	1.7 %	1.8%
3.	Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը (չպայմանավորված բնական աճով) նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով	0.5%	0.5%	0.5%	0.5%	0.5%

3.2 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Առաջիկա 5 տարիներին համայնքի հիմնական նպատակներն են՝

- Համայնքում հետևողականորեն բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով բարելավել բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, համայնքը դարձնել բարեկեցիկ
- Համայնքի ղեկավարի իրավասության շրջանակներում միջոցներ ձեռնարկել պաշտպանելու համայնքի բնակիչների ու տնտեսավարող սուբյեկտների իրավունքներն ու շահերը.
- ապահովել համայնքի նախադպրոցական, մշակույթի և սպորտի բնագավառների կազմակերպությունների անխափան և նպատակային գործունեությունը, իրականացնել այդ կազմակերպությունների շենքերի հիմնական վերանորոգման, ջեռուցման, ջրամատակարարման վերականգնման և գույքի ձեռք բերման աշխատանքներ
- համայնքում պայմաններ ստեղծել՝ զարգացնելու փոքր և միջին բիզնեսը՝ ստեղծելով նոր աշխատատեղեր մասնավոր սեկտորում

- միջոցներ ձեռնարկել համայնքի սոցիալապես անապահով ընտանիքների սոցիալական, կոմունալ-կենցաղային պայմանների բարելավման համար
- բարձրացնել համայնքի բնակչությանը մատուցվող ծառայությունների և սպասարկումների մակարդակն ու որակը՝ բարելավելով համայնքի բյուջեի եկամուտների հավաքման աշխատանքները և նպատակային օգտագործելով բյուջեի միջոցները
- համայնքի բնակչության մշակութային կյանքի և աշխատանքից ազատ ժամերին հանգստի կազմակերպում
- բարելավել համայնքի բյուջեի ֆինանսական վիճակը՝ բարձրացնելով եկամուտների հավաքագրման մակարդակը՝ ճշտելով հողի հարկի և գույքահարկի բազաները
- համայնքում իրականացնել բարեկարգման և կանաչապատման ընդգրկուն աշխատանքներ
- համայնքի ճանապարհների հիմնանորոգում:

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Առաջիկա 5 տարիներին համայնքի հիմնական ծրագրերն են՝

- ✓ **Համայնքի մշակույթի տան վերանորոգում**
- ✓ **Մանկապարտեզի շենքի վերանորոգում**
- ✓ **Համայնքի միջհամայնքային ճանապարհի ասֆալտապատում**
- ✓ **Դպրոցի վերանորոգում**
- ✓ **Կանապառների պատրաստում,տեղադրում**

Նշված խնդիրների լուծման նպատակով նախատեսվող ծրագրերը ներկայացված են ծրագրերի անձնագրերում:

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր N 1

Համայնքի մշակույթի տան վերանորոգում
(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը							
Ծրագրի անմիջական նպատակ՝ ակտիվ մշակութային կյանքի կազմակերպումը՝ երիտասարդության, դպրոցականների ներգրավմամբ							
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	200000.0	200000.0	200000.0	200000.0	200000.0
Ծրագրի միջանկյալ	1.						
		Ելակետային	Թիրախային արժեքներ				

արդյունքներ 1.Փաստաթղթերի կազմում	Ցուցանիշներ	արժեք					
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	200000.0	200000.0	200000.0	200000.0	200000.0
	2.						
2.Շենքի շինարարական աշխատանքներ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	200000.0	200000.0	200000.0	200000.0	200000.0

Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1.Նախահետազոտական ծախսեր: 1.2.Նախահաշիվների կազմում: 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1.Նորգման աշխատանքների կազմակերպում 2.2. Աշխատանքների ավրտ, կատարողական և ընդունման հանձնման ակտերի կազմում
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 200000.0 հազար դրամ Ընդհանուր բյուջեն՝200000.0հազար դրամ
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Բարեգործություն
Ծրագրի հիմնական ռիսկերը	
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչները
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքի մշակույթի տան վերանորոգում, ջեռուցման համակարգի կառուցում,գույքի ձեռքբերում

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր N2

<u>Միջհամայնքային ճանապարհի ասֆալտապատում</u>

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Բազմաբնակարան շենքերի բակային տարածքների բարեկարգումն ու ասֆալտապատում						
Ծրագրի անմիջական նպատակ՝ Ունենալ բարեկարգ և ասֆալտապատ փողոցներ							
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0.0	300000.0	300000.0	300000.0	300000.0	300000.0
Ծրագրի միջանկյալ արդյունքներ 1.Փաստաթղթերի կազմում	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-	300000.0	300000.0	300000.0	300000.0	300000.0

2. տեխնիկական միջոցների ձեռքբերում	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			300000.0	300000.0	300000.0	300000.0	300000.0
Ծրագրի հիմնական գործողությունները	1.1. Տեխնիկական միջոցների ձեռքբերում 1.2. 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.3. Իրականացնել աշխատանքները 2.1. Կազմել, քննարկել և ընդունել աշխատանքների կատարման ավարտական ակտը						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 300000.0հազար դրամ Ընդհանուր բյուջեն՝ 300000.0հազար դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Դոնոռ կազմակերպություններ						
Ծրագրի հիմնական ռիսկերը							
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թ.թ						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ասֆալտապատման աշխատանքների ավարտից հետո կբարելավվի գյուղի վիճակը,հեշտանա մարդկանց տեղաշարժը,ավտոմեքենաների օգտագործումն ու շահառումը արդյունավետ կլինի						

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր Ո 3

<u>Դպրոցի շենքի վերանորոգում</u>

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Դպրոցի շենքի վերանորոգում						
Ծրագրի անմիջական նպատակ՝ դպրոցի վերանորոգում							
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-	100000.0	100000.0	100000.0	100000.0	100000.0
Ծրագրի միջանկյալ արդյունքներ 1.Փաստաթղթերի կազմում	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-	100000.0	100000.0	100000.0	100000.0	100000.0
2. դպրոցի վերանորոգում	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			100000.0	100000.0	100000.0	100000.0	100000.0

Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում 1.2. Կնքել պայմանագիր հաղթող շին. կազմակերպության հետ, իրականացնել աշխատանքները 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Իրականացնել աշխատանքները 2.2. Կազմել, քննարկել և ընդունել աշխատանքների կատարման ավարտական ակտը
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 100000.0հազր դրամ Կապիտալ ծախսեր՝ 100000.0հազր դրամ Ընդհանուր բյուջեն՝ 200000.0հազր դրամ
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Բարեգործություն և պետության կողմից ֆինանսական աջակցություն
Ծրագրի հիմնական ռիսկերը	
Ծրագրի հիմնական շահառուները	դպրոց հաճախող երեխաները, համայնքի բնակչությունը
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ.
Ծրագրի համառոտ նկարագրություն	Դպրոցում ջեռուցման ցանցերի կառուցում, զույգի ձեռքբերում,կապիտալ վերանորոգում

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐՈ4

<u>Կանգառների պատրաստում,տեղադրում</u>

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Կանգառների պատրաստում,տեղադրում						
Ծրագրի անմիջական նպատակ՝							
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-	500.0	500.0	500.0	-	-
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
1.Փաստաթղթերի կազմում		2016	2017	2018	2019	2020	2021
		-	500.0	500.0	500.0	-	-
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2 կանգառի կառուցում		2016	2017	2018	2019	2020	2021
			500.0	500.0	500.0	-	-
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.2. տեխնիկայի ձեռքբերում						

	2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. քարի ձեռքբերում 2.2. թիթեղների ձեռքբերում
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ Կապիտալ ծախսեր՝ 500.0 հազար դրամ Ընդհանուր բյուջեն՝ 500.0 հազար դրամ
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	
Ծրագրի հիմնական ռիսկերը	
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչները
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ.
Ծրագրի համառոտ նկարագրություն	Կանգառների պատրաստում,տեղադրում

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր Ն 3

<u>Մանկապարտեզի շենքի վերանորոգում</u>

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Մանկապարտեզի վերանորոգում						
Ծրագրի անմիջական նպատակ՝ Մանկապարտեզի վերանորոգում							
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-	3000.0	3000.0			
Ծրագրի միջանկյալ արդյունքներ 1.Փաստաթղթերի կազմում	3.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-	17000.0	17000.0			
2. Մանկապարտեզի վերանորոգում	4.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			17000.0	17000.0			

Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում 1.2. Կնքել պայմանագիր հաղթող շին. կազմակերպության հետ, իրականացնել աշխատանքները 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Իրականացնել աշխատանքները 2.2. Կազմել, քննարկել և ընդունել աշխատանքների կատարման ավարտական ակտը
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 3000.0հազր դրամ Կապիտալ ծախսեր՝ 17000.0հազր դրամ Ընդհանուր բյուջեն՝ 20000.0 հազր դրամ
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Բարեգործություն և պետության կողմից ֆինանսական աջակցություն
Ծրագրի հիմնական ռիսկերը	
Ծրագրի հիմնական շահառուները	Մանկապարտեզ հաճախող երեխաները, համայնքի բնակչությունը
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2018թթ.
Ծրագրի համառոտ նկարագրություն	մանկապարտեզներում ջեռուցման ցանցերի կառուցում, ճաշարանի հիմնանորոգում

4. ՀԶՀԾ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Համայնքի յուրաքանչյուր տարվա բյուջեի նախագծի կազմման ծրագրային հիմքը ՀԶՀԾ-ում համապատասխան տարվա համար նախատեսված ոլորտային և բնակավայրային ծրագրերն են, որոնց իրականացման համար հաշվարկվել են ֆինանսավորման համապատասխան աղբյուրներ և ծախսեր: Գործնականում, ՀԶՀԾ-ի իրականացումը հանգում է հիմնականում (չհաշված ֆինանսավորման այլ աղբյուրների հաշվին նախատեսված ծրագրերը) համայնքի գալիք հինգ տարիների բյուջեների կատարմանը:

5. ՀԶՀԾ-Ի ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

ՀԶՀԾ-ի ներքին մոնիթորինգն իրականացվելու է ՀԶՀԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ-ի կողմից յուրաքանչյուր տարին մեկ անգամ:

ՀԶՀԾ-ի մոնիթորինգն իրականացվելու է ըստ ոլորտային ծրագրերի ու միջոցառումների աշխատանքների կատարման ցուցանիշների:

Կից ֆայլ*ում* ներկայացված է ՀԶՀԾ-ում ներառված ծրագրերի միջոցառումների մոնիթորինգի և գնահատման վերաբերյալ տեղեկատվության ներկայացման ձևանմուշը:

Աղյուսակ 7. ՀԶՀԾ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
(Նոր Արմավիր համայնք)
(2017-2021 թթ.)

Պարտադիր խնդիր	Բյուջե տա-	Ծրագրի կատարումն ըստ տարիների	Ֆինանսավորման աղբյուրներ	Ծախսերի դասեր	Ֆինանսավորման կարգավիճակ

	վորված միջոցներ	2017	2018	2019	2020	2021	Համայնքի սեփական եկամուտներ	Ներքին պաշտոնական դրամաշնորհներ	Արտաքին պաշտոնական դրամաշնորհներ	Բարեգործություն/հովիրատվություն	Պետություն-համայնք-մասնավոր հատված համագործակցություն	Այլ աղբյուրներ	Ընթացիկ ծախսեր	Կապիտալ ծախսեր	Ֆինանսավորման առկա է	Ֆինանսավորման շուրջ ընթանում են բանակցություններ	Ներդրվացվել է	Ֆինանսավորման հարցը լուծված չէ
Համայնքի մշակույթի տան վերանորոգում,		200000.0	200000.0	200000.0	200000.0	200000.0	V	V		V								
Կանգառների պատրաստում, տեղադրում		500.0	500.0				V			V		V						
Մանկապարտեզի շենքի վերանորոգում		20000.0	20000.0				V	V	V	V								
Միջհամայնքային ճանապարհի վերանորոգում		300.000.0	300.000.0	300.000.0	300.000.0	300.000.0			V		V	V						
Դպրոցի շենքի վերանորոգում		200000.	200000	200000	200000	200000	V											

5. ՀԶՀԾ-Ի ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

ՀԶՀԾ-ի ներքին մոնիթորինգն իրականացվելու է ՀԶՀԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ-ի կողմից յուրաքանչյուր տարին մեկ անգամ:

ՀԶՀԾ-ի մոնիթորինգն իրականացվելու է ըստ ոլորտային ծրագրերի ու միջոցառումների աշխատանքների կատարման ցուցանիշների:

Կից ֆայլ*ում* ներկայացված է ՀԶՀԾ-ում ներառված ծրագրերի միջոցառումների մոնիթորինգի և գնահատման վերաբերյալ տեղեկատվության ներկայացման ձևանմուշը:

Աղյուսակ 8. Մ Ո Ն Ի Թ Ո Ր Ի Ն Գ Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

ՆՈՐ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔ

(2017-2021 թվականներ)

Տրամաբանական մոդելի բաղադրիչ	Ցուցանիշի փաստացի արժեք (2016)	Ցուցանիշի թիրախային արժեք (2017)	Ցուցանիշի փաստացի արժեք (2017)	Ցուցանիշի կատարողական (2017)	Ցուցանիշի թիրախային արժեք (2018)	Ցուցանիշի փաստացի արժեք (2018)	Ցուցանիշի կատարողական (2018)	Ցուցանիշի թիրախային արժեք (2019)	Ցուցանիշի փաստացի արժեք (2019)	Ցուցանիշի կատարողական (2019)	Ցուցանիշի թիրախային արժեք (2020)	Ցուցանիշի փաստացի արժեք (2020)	Ցուցանիշի կատարողական (2020)	Ցուցանիշի թիրախային արժեք (2021)	Ցուցանիշի փաստացի արժեք (2021)	Ցուցանիշի կատարողական (2021)	Տվյալների հավաքագրման պարբերականությունը		Ցուցանիշի ստացման աղբյուր	Ցուցանիշի ստացման մեթոդ
																	Կիսամյակ յին	Տարեկան		
ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ																				
1.Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով)																		X	Մարզպետարան, համայնքապետարան)	Փաստաթղթային ուսումնասիրություն/հարցազրույց
2.Համայնքի սեփական եկամուտների տարեկան																		X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն
3.Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով, չհաշված համայնքի բնակչության փոփոխությունը բնական աճի պատճառով																		X	ՀՀ Ոստիկանություն	Հարցում
ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ																				
1.Ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպումը՝ երիտասարդության ներգրավմամբ																				

1.1.Համայնքի մշակույթի տան կահավորում և ջեռուցման համակարգի անցկացում																	X	Համայնքա-պետարան	Փաստա-թղթային ուսումնա-սիրություն
2. Համայնքի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, ինչպես նաև համայնքային գերեզմանատան պահպանումը և գործունեության ապահովումը																			
2.2. Համայնքի փողոցների ասֆալտապատում																	X	Համայնքա-պետարան	Փաստա-թղթային ուսումնա-սիրություն
2.5.Համայնքի կանգառների կառուցում																	X	Համայնքա-պետարան	Փաստա-թղթային ուսումնա-սիրություն
																	X	Համայնքա-պետարան	Փաստա-թղթային ուսումնա-սիրություն
4.Համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը նպաստում, սպորտային հրապարակների և մարզական այլ կառույցների շինարարության իրականացում, հանգստի գոտիների ստեղծումը																			
4.7. Համայնքի մշակույթի տան վերանորոգում																	X	Համայնքա-պետարան	Փաստա-թղթային ուսումնա-սիրություն

5.Բարեգործության խթանումը՝ համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով																				

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման հնգամյա ծրագիրը հիմք է հանդիսանալու համայնքի տարեկան ծրագրերի և բյուջեների մշակման և կատարման աշխատանքները կազմակերպելիս:

Ելնելով ՆորԱրմավիր համայնքիոցիալ-տնտեսական զարգացման հնգամյա ծրագրի ռազմավարությունից և ընդհանուր նպատակներից՝ շատ կարևոր է սեփական եկամուտների լրացուցիչ աղբյուրներ գտնելը, ֆինանսական միջոցների արդյունավետ հավաքագրման կազմակերպումն ու նպատակային օգտագործումը: 2017-2021թթ. համայնքային բյուջեները պետք է մշակել՝ որպես զարգացման ծրագրային բյուջեներ, որոնցով հնարավոր կլինի իրականացնել ինչպես ընթացիկ և հիմնական վերանորոգման աշխատանքներ, այնպես էլ սոցիալ-տնտեսական զարգացման տարբեր ծրագրեր:

Համայնքապետարանի բաժինները և ծառայությունները կմշակեն իրենց բնագավառի զարգացման կոնկրետ ծրագրեր, որոնք կարելի է ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարություն, մարզպետարան: Լրացուցիչ ներդրումներ հայթայթելու նպատակով նախատեսվում է փնտրել ինվեստիցիաների նոր աղբյուրներ, ներգրավել գործարարների սեփական միջոցները, տարբեր սոցիալական հիմնադրամների ներդրումները:

ՀԶՀԾ-ն հանդիսանալու է համայնքի գալիք հինգ տարիների գործունեության ուղեցույցը: 2017-2021թթ. ընթացքում ՀԶՀԾ-ում ընդգրկված ծրագրերի իրականացմանն են ուղղված լինելու համայնքի ՏԻՄ-երի ջանքերն ու աշխատանքը՝ մոբիլիզացնելով համայնքի ֆինասնական, մարդկային և նյութական ռեսուրսների ողջ պոտենցիալը: ՀԶՀԾ-ի իրագործումը հնարավորություն կտա քայլ առ քայլ մոտենալ հեռվում նշմարվող այն ցանկալի տեսլականին, որպիսին ցանկանում է տեսնել համայնքի յուրաքանչյուր բնակիչ: ՀԶՀԾ-ում տեղ գտած դրույթները լինելու են այն ծրագրային հիմքը, որի վրա հենվելով կազմվելու է համայնքի յուրաքանչյուր տարվա բյուջեն:

Ծրագիրը հաջողությամբ իրագործելու համար ՏԻՄ-երը պետք է սերտորեն և արդյունավետ համագործակցեն պետական կառույցների, միջազգային դոնոր կազմակերպությունների և այլ շահագրգիռ կողմերի և կառույցների հետ:

ՀԶՀԾ-ի իրականացման հսկողությունը և ներքին վերահսկողությունը կիրականացնեն համայնքի ղեկավարը և համայնքի ավագանին: ՀԶՀԾ-ի ներքին վերահսկողության արդյունքները կներկայացվեն համայնքի ավագանուն՝ ի գիտություն:

Յուրաքանչյուր հաջորդ տարի կկատարվի ՀԶՀԾ-ի իրականացման նախորդ տարվա արդյունքների ուսումնասիրություն, ամփոփում, ձեռքբերումների գնահատում և թերությունների բացահայտում: Նախորդ տարվա արդյունքների հիման վրա համապատասխան ուղղումներ և լրացումներ կկատարվեն մնացյալ տարիների ծրագրերում:

Հիմնվելով ՀԶՀԾ-ի իրականացման տարեկան հաշվետվության վերաբերյալ համայնքի ավագանու կայացրած որոշման վրա, ՀԶՀԾ-ի վերանայման անհրաժեշտության դեպքում, համայնքի ղեկավարը ՀԶՀԾ-ում փոփոխություններ ու լրացումներ կատարելու վերաբերյալ իր և (կամ) համայնքի ավագանու անդամներից ստացված բոլոր առաջարկությունները ներկայացնում է համայնքի ավագանու քննարկմանը և հաստատմանը:

Համայնքի ավագանու անդամի (անդամների) առաջարկած այն փոփոխությունները և (կամ) լրացումները, որոնք ավելացնում են ՀԶՀԾ-ի իրականացման ծախսերը, համայնքի ավագանու որոշմամբ ընդունվում են միայն համայնքի ղեկավարի եզրակացության առկայությամբ և ավագանու նիստին ներկա անդամների ձայների երկու երրորդով:

ՀԶՀԾ-ի փոփոխությունները և (կամ) լրացումները, ավագանու հաստատումից հետո, հրապարակվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Աշխատակազմի քարտուղար Ն.Թաքիրյան